

Հայաստանի Հանրապետության վիճակախարարությունը տեղեկատվություն է ներկայացնում 2000 թվականի հունվար-փետրվարին երկրի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

Սույն ամսական վիճակագրական գեկույցում առանձին հավելվածով տեքստային մասով ներկայացվում է տեղեկատվություն ուսումնասիրության ընդգրկման դաշտի, կատարված ընտրանքի և ցուցանիշների հաշվառման, ամփոփման ու մշակման մեթոդաբանության մասին:

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2000թ. հունվար-փետրվարի արդյունքները բնութագրող հիմնական ցուցանիշները

	2000թ. հունվար- փետրվար	2000թ. հունվար-փետրվարը տոկոսներով 1999թ. հունվար- փետրվարի նկատմամբ
Համախառն ներքին արդյունք, մլն. դրամ		
շուկայական գներով ¹	96958.4	101.4
հիմնական գներով ¹	88186.4	x
ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլյատորը (ընթացիկ գներով հաշվարկված ՀՆԱ-ի հարաբերությունը նախորդ տարվա համադրելի գներով հաշվարկված ՀՆԱ-ի ծավալի նկատմամբ), տոկոսներով	x	100.0
Արդյունաբերական արտադրանքի ծավալը, մլն. դրամ	43250.0	101.0
Սպառողական ապրանքների արտադրության ծավալը, մլն. դրամ	21176.9	119.5
Էլեկտրաէներգիայի արտադրությունը, մլն. կՎտ. ժամ	1140.1	98.6
Գյուղատնտեսության համախառն արտադրանքը, մլն. դրամ	18205.4	99.5
Շինարարություն		
իրականացված կապիտալ շինարարության ծավալը, մլն. դրամ	4126.5	84.1
շահագործման հանձնված բնակելի տները, քառ.մ ընդհանուր մակերեսով	7154	57.7
Ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնաշրջանառությունը, մլն. տոննա-կմ	465.5	101.0
Արտաքին առևտրաշրջանառությունը		
մլն. ԱՄՆ դոլար	161.2	108.9
մլրդ. դրամ	85.6	
այդ թվում՝		
արտահանում		
մլն. ԱՄՆ դոլար	33.9	121.1
մլրդ. դրամ	17.9	
ներմուծում		
մլն. ԱՄՆ դոլար	127.37	106.1
մլրդ. դրամ	67.7	

¹ Հիմնական գներով ՀՆԱ-ն, ի տարբերություն շուկայական գներով ՀՆԱ-ի, իր մեջ չի ներառում հարկերն ապրանքների վրա, բայց ներառում է սուբսիդիաներն ապրանքների վրա: Հիմնական գներով տվյալները բերված են առանց ֆինանսական միջնորդության անուղղակիորեն չափվող ծառայությունների:

	2000թ. հունվար-փետրվար	2000թ. հունվար-փետրվարը տոկոսներով 1999թ. հունվար-փետրվարի նկատմամբ
Մեկ աշխատողի միջին ամսական անվանական աշխատավարձը (գնահատական) ¹ , դրամ	19457	119.1
Բնակչության դրամական եկամուտները, մլն. դրամ	79281	107.1
Բնակչության իրական տնօրինած եկամուտները, մլն. դրամ	75510. 4	107.2
Բնակչության դրամական ծախսերը, մլն. դրամ	86139.0	109.1
Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալը, մլն. դրամ	50444.2	114.5
Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, մլն. դրամ	23216.6	103.2
Սպառողական գների ինդեքսը	102.0 ²	100.0
Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսները	x	104.5

¹ Ամսական պարբերականությամբ մոտ 9000 տնտեսավարող սուբյեկտներից ստացվող վիճակագրական հաշվետվության տվյալների համաձայն:

² 2000թ. հունվար-փետրվարը 1999թ. դեկտեմբերի նկատմամբ: